



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ՀՈՒԿՈՒՏԻ  
Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ Ա. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, 21 Մարտը Մեծ Պահոց 6-րդ Կիրակին է, որ կը կոչուի՝ Գալստեան Կիրակի:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Հոլիվուտի Ա. Կարապետ Մայր եկեղեցւոյ Ա. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

Յաւարտ Ա. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի եկեղեցւոյ նախկին հովիւներէն՝ վախճանեալ Տ. Վաչէ Ա. Զիւլ. Նազգաշեանի վախճանման քառասունքին առիթով:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT  
ST. GARABED CHURCH**

Sunday, March 21<sup>st</sup>, 2010, is the sixth Sunday of Great Lent, Sunday of the Advent.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at St. Garabed Church in Hollywood.

At the conclusion of Divine Liturgy, the Prelate will preside over the 40<sup>th</sup> day requiem service in memory of the late Archpriest Fr. Vatche Naccashian.

\*\*\*

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԷ «ԱՍՊԱՐԷԶ ՀՈՐԻՉՈՆ»  
ՆՈՐ ԸԵՆՔԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ**

Կիրակի, 21 Մարտին, կ.ե. ժամը 3-ին, պաշտօնական բացումը պիտի կատարուի «Ասպարէզ Հորիզոն» նոր շէնքին, որ կը գտնուի Փոքրիկ Հայաստանի մէջ, Հոլիվուտ: Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ հանդիսութեան եւ աղօթքով ու օրհնութեան խօսքով պիտի կատարէ բացման արարողութիւնը:

## **PRELATE TO PRESIDE OVER OPENING OF ASBAREZ-HORIZON HEADQUARTERS**

The official opening of the Asbarez Horizon new headquarters will take place in the afternoon of Sunday, March 21<sup>st</sup>.

The Prelate will officiate over the opening of the headquarters located in Little Armenia at 1203 N. Vermont Ave.

\*\*\*

### **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐբԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ «ՋԱՆ ԹԱՎՐԻԶ» ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻՆ**

Շաբաթ, 20 Մարտի երեկոյեան, Կլենտէյլի «Civic Auditorium»-ին մէջ, տեղի պիտի ունենայ Թաւրիզահայութեան «Ջան Թաւրիզ» միութեան 5-րդ տարեկան ձեռնարկը:

Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր բարեմաղթութիւնները: Առաջնորդ Սրբազան Զօր պիտի ընկերանայ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Կոմիտաս Քիւյ. Թորոսեան:

### **5<sup>TH</sup> ANNUAL “JAN TAVRIZ” BANQUET**

On the evening of Saturday, March 21st, the 5<sup>th</sup> annual “Jan Tavriz” banquet of Iran’s Tavriz Armenians will take place at the Civic Auditorium in Glendale.

The Prelate, accompanied by Rev. Fr. Gomidas Torossian, will convey his blessings to the organizers of the event.

\*\*\*

### **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐբԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԶԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՌԵՏՈՒՐԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ**

Լոս Անճելըսի Զայ Ամերիկեան Առետուրի Գրասենեակի 11-րդ տարեդարձին առիթով, ճաշկերոյթ-տօնակատարութիւն մը կազմակերպուած է, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 20 Մարտի երեկոյեան Կլենտէյլի «Յիլթըն» պանդոկին մէջ:

Ձեռնարկի ընթացքին գլահատանքի պիտի արժանանան գաղութիս մէջ յաջողութիւն արձանագրած անձնաւորութիւններ:

Առաջնորդ Սրբազան Զայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքը:

## ARMENIAN AMERICAN CHAMBER OF COMMERCE GALA

On the evening of Saturday, March 21<sup>st</sup>, 2010, the 11<sup>th</sup> annual awards business gala of the Armenian American Chamber of Commerce will be held at the Glendale Hilton.

During the banquet individuals and businesses will be honored for their contributions to the community.

The Prelate will attend and deliver the invocation.

\*\*\*

### ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՕՐԴՆԷՔ Ս. ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ



Կիրակի, 14 Մարտին,  
Սրբոց Զառասնից  
Մանկանց տօնին եւ  
Եկեղեցւոյս  
անուանակոչութեան  
առիթով, Թեմիս Բարեխամ  
Առաջնորդ՝ Բարձր. Ս.  
Մուշեղ Արք. Մարտիրոսեան  
Օրէնճ Զառնթիի Սրբոց  
Զառասնից Մանկանց  
Եկեղեցւոյ մէջ Սուրբ եւ  
անմահ Պատարագ  
մատուցեց եւ իր հոգեշունչ  
պատգամը փոխանցեց  
հաւատացեալ ժողովուրդին:

Ս. Խորանին սպասարկեցին Ազգային Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Յոգճ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիւմեան, եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Յրանդ Զիւյ. Երեցեան:

Իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը վեր առաւ Զրիստոսի նուիրեալ 40 զինուորներուն նահատակութեան ու քաջարի կեցուածքին իմաստը, նշելով, որ անոնց մարտիրոսութիւնը խօսուն պատգամ է մերօրեայ մարտահրաւերներ դիմագրաւող հաւատացեալներուն համար:

Յաւարտ Ս. Պատարագի, կատարուեցաւ յատուկ հոգեհանգիստ ի հոգիս եկեղեցւոյ նախկին հոգեւոր հովիւին եւ բարերարներուն ու սպասարկուներուն: Արարողութենէն ետք, Առաջնորդ Սրբազան Յայրը, շրջապատուած առընթերակայ հոգեւորականներով ու սարկաւազաց եւ դպրաց դասերով, առաջնորդուեցաւ Եկեղեցւոյ «Ղուկասեան» սրահը, ուր, կազմակերպութեամբ Եկեղեցւոյ Տիկնանց միութեան եւ մասնակցութեամբ

հոծ բազմութեան, կատարեց մատաղի օրհնութիւն: Մատաղի գլխաւոր հովանաւորն էր Թաթարեան ընտանիքը:

Աւելի ուշ, տեղի ունեցաւ սիրոյ ճաշ:

Այս առիթով իր արտասանած սրտի խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը գնահատանք յայտնեց եկեղեցւոյ մեծ ընտանիքին, եւ յատուկ կերպով գնահատեց եկեղեցւոյ Տիկնանց միութեան վարչութիւնն ու անդամները, նաեւ բոլոր անոնք, որոնք մաս կազմած էին մատաղի պատրաստութեան, հրաւիրելով բոլորը, որ համախմբուին եկեղեցւոյ եւ Ազգին շուրջ, պահպանեն իրենց միասնականութիւնը եւ միութիւնը, զարկ տան մեր մէջ հոգեւոր եւ Ազգային ապրումներուն առաւել կենսաւորումին, ու միասնաբար յառաջ տանին բոլոր աշխատանքները, ի նպաստ Օրէնճ Բաունթիի գաղութի առաւել ծաղկումին:

«Պահպանիչ» աղօթքով վերջ գտաւ արարողութիւնն ու սիրոյ ճաշը:

Պատարագին եւ արարողութեան ներկայ էին Ազգ. Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Կարօ Յակոբեան, եկեղեցւոյ եւ անոր «Ղուկասեան» սրահի բարերարներ՝ Բեօյլեան եւ Ղուկասեան ընտանիքի անդամներն ու հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

## PRELATE CELEBRATES DIVINE LITURGY ON THE NAME DAY OF FORTY MARTYRS CHURCH OF ORANGE COUNTY



On Sunday, March 14<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian celebrated Divine Liturgy at Forty Martyrs Church in Orange County on the occasion of the Feast of the Forty Martyrs which is also the name day of the church.

Assisting at the altar were Very Rev. Fr. Barthev Gulumian and parish pastor Rev. Fr. Hrant Yeretjian.

Prior to his sermon, the Prelate gave thanks to God for granting the opportunity to be with the Forty Martyrs parish community, and called on the

faithful to join him in prayer for peace and harmony to all the peoples of the world. The Prelate remembered the founders of Forty Martyrs Church and all the faithful servants who driven by their faith, devoted their time and efforts to the establishment and advancement of the church.

The Prelate's sermon focused on the lives and virtues of the forty martyrs who were martyred in the year 316 for their unyielding faith and

devotion to God. The Prelate pointed out how Sepastia lake became like a baptismal font for the martyred youth, from where looking up to the heavens they saw the Light which is Jesus Christ and received inspiration to remain steadfast in their faith. Those who defended their faith and their faith in our Savior Jesus Christ became worthy of eternal life while the one who faltered in his faith and fled the freezing waters succumbed. Like the forty martyrs, we too must live a life of faith and prayer and stand firm in our devotion and loyalty to God so as not to allow anyone or any thing to weaken our faith, said the Prelate, and concluded by urging the faithful to become renewed by the inspiring lives of the forty martyrs.

Following the service requiem was offered for the souls of the late parish pastor and servants of the church, after which the Prelate was led in a procession to “Gugasian” Hall to conduct the blessing of *madagh*.

A luncheon followed at the hall. Rev. Fr. Hrant Yeretizian welcomed the faithful and expressed his thanks to the Prelate for joining the community on this occasion and to Fr. Barthev for participating in the services. He continued, thanking Executive Council Chair Dr. Garo Agopian, church and hall sponsors Keuylian and Gugasian families, and sponsors of the day’s *madagh*, the Tatarian family. A short cultural program also took place.

In his message, the Prelate commended the Ladies Guild and all those who worked hard to prepare for the day. He invited the community to gather around the church and unite their efforts, working in harmony for the splendor of Forty Martyrs Church and the parish community of Orange County.

The day came to a close with the benediction by the Prelate.

\*\*\*

## ԹԱԼԵԱՆ ՄԱՆԿԱՄԱՈՒՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ



Ազգային  
Առաջնորդարանի սրահն ու  
Նրբանցքները Երեքշաբթի, 16  
Մարտի առաւօտուն  
պարուրուեցան գունագեղ  
տարազներով ճռուող  
մանուկներու կենսաւորող  
մթնոլորտին մէջ: Արդարեւ,  
Ազգային Թալեան  
մանկամտուրի աշակերտները,  
մանկամտուրի վարիչ Տիկին  
Յելէն Մանուչարեանի,  
դաստիարակներու եւ կարգ  
մը ծնողներու  
առաջնորդութեամբ, այցի

եկան Ազգային Առաջնորդարան եւ իրենց անմեղունակ  
արտայայտութիւններով պահ մը մանկացուցին »Ազգի Տունը«:



Առաջնորդ Սրբազանը դիմաւորեց դեռատի աշակերտներն ու անոնց ընկերացող ուսուցիչները: Առաջնորդ Սրբազանին կողքին էին Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչները՝ Գերպ. Տ. Միւռն Տ. Վրդ. Ազնիկեան եւ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, ինչպէս նաեւ Ազգ. Առաջնորդարանի անձնակազմի անդամներ: Մանուկները նախ առաջնորդուեցան «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատուռը, ուր միասնաբար երգեցին «Յայր մեր»ը եւ ունկնդիր եղան Առաջնորդ Սրբազանին ու Յոգեւոր Յայրերուն Արեւագալի ու այլ շարականներու երգեցողութեան:

Աղօթքի պահէն ետք, աշակերտները խմբուեցան «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ. անոնք իբրեւ իւրայատուկ նուէր՝ պատրաստած էին սեղմ յայտագիր մը՝ երգերով ու արտասանութիւններով: Դեղին եւ կապոյտ դասարանները նաեւ իրենց ձեռակերտը եղող յուշանուէրներ յանձնեցին Առաջնորդ Սրբազանին:

Գրատուն այցելելէ ետք, երբ աշակերտները կը պատրաստուէին բարձրանալ դահլիճ, պատին վրայ նկատեցին Զաչն Վարդան Մամիկոնեանի բարձրաքանդակ պատկերը եւ ինքնաբոլիս կերպով սկսան երգել Ս. Վարդանանց նուիրուած երգեր: Դալիճին մէջ, Առաջնորդ Սրբազանը անոնց ուղղեց սրտի խօսք մը. ան յայտնեց, թէ աշակերտները այսօր իր հիւրերն են, ինք զանոնք կ'ընդունի այն դահլիճին մէջ, ուր այցելութեան կու գան պետական անձնաւորութիւններ ու ականաւոր մարդիկ. ան մաղթեց, որ աշակերտներն ալ ականաւոր անհատներ դառնան, երբ հասակ առնեն: Հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանը աշակերտներուն, ուսուցիչներուն ու ընկերակից ծնողներուն յանձնեց յուշանուէրներ ու պատկերներ:

Այցելութեան աւարտին, մանուկներն ու դաստիարակները վերադարձան դպրոց, յիշատակելի պահ մը բոլորելէ ետք Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ:

## TAVLIAN PRE-SCHOOL STUDENTS VISIT THE PRELACY



On the morning of Tuesday, March 16<sup>th</sup>, 2010, Tavlian Pre-School students, accompanied by director Mrs. Helen Manoucherian, teachers and parents, visited the Prelacy. Upon their arrival, the students were led to the “St. Dertad and St. Ashkhen” Chapel where they were greeted by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Very Rev. Fr. Muron Aznikian, and

Very Rev. Fr. Barthev Gulumian. In the Chapel, the students sang the Lord's Prayer and followed as the Prelate and Rev. Fathers conducted a brief Lent Sunrise service.

The students then headed to the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall where they presented a program of songs and recitations, after which they presented the Prelate with a hand made memento.

Following a tour of the bookstore, the students gathered in the reception room where the Prelate conveyed his message and presented the students, teachers, and parents with mementos.

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱԶԳ. Վ. ԵՒ Ա. ՇԱՄԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ



Երեքշաբթի, 16 Մարտի կեսօրին, թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Ազգ. Վահան եւ Անուշ Շամլեան վարժարանի տնօրէն Տիար Վազգէն Մատելեանի, եւ անոր յանձնեց վարժարանին 35ամեակին առիթով Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին

օրինութեան գիրը:

Ծանօթ է, որ վարժարանին 35ամեակի գլխաւոր հանդիսութիւնը տեղի ունեցած էր 6 Մարտին, ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր եւ Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներու: Հանդիսութեան ընթացքին, Առաջնորդ Սրբազանը ուղղած էր պատգամ մը, գնահատանք արձանագրելով վարժարանին առաքելութեան ու արձանագրած յաջողութիւններուն մասին:

## PRELATE WELCOMES V & A CHAMLIAN SCHOOL PRINCIPAL

On the afternoon of Tuesday, March 16<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed the visit of Vahan and Anoush Chamlian School Principal Mr. Vazken Madenlian.

During the visit, the Prelate presented Mr. Madenlian with the letter of blessing of H.H. Catholicos Aram I on the 35<sup>th</sup> anniversary of the school.

The 35<sup>th</sup> anniversary banquet took place on March 6<sup>th</sup>, 2010, under the auspices of and with the attendance of the Prelate and Executive Council members, during which the Prelate commended the mission and continued successes of the school.

\*\*\*

## **ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ԿՐՕՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԶԱՆԴԻՊՈՒՄԻՆ**

Երեքշաբթի, 16 Մարտին, Ազգ. Առաջնորդարանիս կողմէ բանտարկեալներու ծառայութիւն մատուցող Արժ. Տ. Աշոտ Քիւյ. Գամպուրեան եւ Րաֆֆի Սրկ. Կարապետեան մասնակից եղան կրօնական ներկայացուցիչներու հանդիպումի մը, որ հրաւիրուած էր Լոս Անճելըս գաւառի ոստիկանապետի գրասենեակին կողմէ:

Չրաւիրեալներուն շարքին էին համայնքներու կամաւոր ծառայութիւն մատուցողներ. հանդիպումին նպատակն էր խորհրդակցիլ Լոս Անճելըսի տարբեր համայնքները յուզող ու մտահոգող հարցեր, ինչպէս նաեւ գործակցութիւն ստեղծել նման հարցերու դարմանումին համար: Զննարկման նիւթ եղան նաեւ յառաջիկայ աշխատանքներ: Յաջորդ հանդիպումը նախատեսուած է 15 Յունիսին:

## **PRELACY REPRESENTATIVES PARTICIPATE IN L.A. COUNTY SHERIFF'S DEPARTMENT CLERGY COUNCIL MEETING**

On Tuesday, March 16<sup>th</sup>, 2010, Chaplain Rafi Garabedian and Rev. Fr. Ashod Kambourian, both of whom are involved in the Prelacy prison ministry, attended the Executive Clergy Council meeting of the Los Angeles County Sheriff's Department.

The Council is comprised of volunteer clergy and lay leaders who work in collaboration with the Sheriff's Department to identify and address community issues and improve quality of life for L.A. area residents. The meeting was called to discuss upcoming events for the coming year. The next meeting will be held on June 15.

\*\*\*